ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի հունիսի 26-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ ***Լ. Մուրադյանի***
Գ. Գաբրիելյանի
Մ. Քարտաշյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար ***Փ. Կարապետյանի***

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների
ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների

Օրակարգում

1. ***ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:***

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը մինչ օրակարգային հարցերի քննարկումը անդրադարձավ 18.06.2018 թ կայացած խորհրդակցության ընթացքում տրված հանձնարարականների կատարմանը:

1-ին հանձնարարականի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը տեղեկացրեց, որ Թաիրովի և Արևադաշտի միջնակարգ դպրոցների հետ կապված ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ Արմավիրի մարզային դատախազին և ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետին՝ համապատասխան ընթացք տալու համար:

3-րդ հանձնարարականի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը նշեց, որ ազգաբնակչության կողմից կան որոշակի բողոքներ և դժգոհություններ, կապված << ART>> բարեգործական ընկերության կողմից իրականացվող <<Հատուցում>> ծրագրի վերաբերյալ և հանձնարարեց ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին՝ ևս մեկ անգամ ուսումնասիրել այն և ներկայացնել տեղեկատվություն:

4-րդ հանձնարարականի առնչությամբ կապված ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում անասնաբույժների հաստիքների հետ Ա.Այվազյանը տեղեկացրեց, որ մարզպետի համապատասխան շրջաբերական գրությունն արդեն իսկ ուղարկվել է համայնքներին և գործընթացն իրականացվում է: Որոշակի խնդիրներ կան Նորապատ համայնքում, որի առնչությամբ մարզպետ Գ. Միրիջանյանը

հանձնարարեց առաջարկել ինչպես Նորապատ, այնպես էլ բոլոր համայնքների ղեկավարներին համայնքներում անասնաբուժական ծառայությունն իրականացնելու համար կնքել համապատասխան պայմանագրեր:

9-րդ կետի հանձնարարականի վերաբերյալ մարզպետը հանձնարարեց ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հ.Հարությունյանին՝ ապահովել Էջմիածնի ԲԿ-ի շենքից տրված տարածքների վարձակալության վճարների մասով պարտավորությունների կատարումը և փաստաթղթերի ներկայացումը՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան ընթացք տալու համար, ինչպես նաև նշեց, որ վարձակալության հետ կապված իրականացվող ողջ գործընթացը պետք է իրականացվի միանգամայն օրինական դաշտում և արտոնյալներ չպետք է լինեն:

13-րդ կետի հանձնարարականի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը ներկայացրեց կարկուտից տուժած համայնքների վերաբերյալ տեղեկատվությունը միաժամանակ նշելով, որ գործընթացը դեռ չի ավարտվել և վերջնական արդյունքները առաջիկայում կներկայացվեն:

14-րդ հանձնարարականի վերաբերյալ կապված ՀՀ Արմավիրի մարզի անօթևան բնակիչներին կացարանով ապահովելու խնդրին՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Ապիտոնյանը տեղեկացրեց, որ գործընթացը գտնվում է քննարկման փուլում:

Այնուհետև մարզպետն անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկմանը:

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի բնակիչներ Հովսեփ Փոլադյանի և Էդգար Փոլադյանի բողոքի վերաբերյալ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանն անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի բնակիչներ Հովսեփ Փոլադյանի և Էդգար Փոլադյանի կողմից ներկայացված բողոքին՝ կապված 60 տոննա ծիրանի մթերման և ընդունող կազմակերպության կողմից չվճարելու խնդրի հետ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Քարտուղարության պետ Դ.Դավթյանին և Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանին՝

Ստեղծել համապատասխան հանձնաժողով, տեղում ուսումնասիրության ենթարկել քաղաքացիներ Հովսեփ և Էդգար Փոլադյանների դիմումում բարձրացված խնդիրը և արդյունքների մասին զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:

(Ժամկետ 02.07.2018թ):

Հարց 2 ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքի վթարային շենքերի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին, Քաղաքաշինության վարչության պետի տեղակալ Հ.Կուղինյանին, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն Լենուղի համայնքում գտնվող վթարային շենքերի վերաբերյալ:

(Ժամկետ՝ 02.07.2018թ):

Հարց 3 ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ, Արևաշատ, Մրգաշատ և Արշալույս համայնքներում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին՝ ուսումնասիրել համայնքներում տիրող իրավիճակը, վերլուծել համայնքի ազգաբնակչության կողմից ներկայացված դժգոհությունները և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:

(ժամկետ 02.07.2018թ):

Միաժամանակ անդրադառնալով վերը նշված խնդրին ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը մասնավորապես նշեց, որ համայնքներում միանգամայն անընդունելի են անօրինական և կլանային գործողությունները և դրանք իրականացնողները կպատժվեն օրենքի ողջ խստությամբ:

Հարց 4.ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների վերամշակում իրականացնող ձեռնարկությունների հետ հանդիպում կազմակերպելու մասին:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա. Այվազյանին 27.06.2018թվականին հրավիրել ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների վերամշակում իրականացնող ձեռնարկություններր պատասխանատուներին ՀՀ արմավիրի մարզպետի մոտ հանդիպման:

Հարց 5.

ՀՀ Արմավիրի մարզի <<Մեծամորի ԲԿ>>-ում կադրային փոփոխությունների վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հ.Հարությունյանին՝

Իրականացնել կադրային փոփոխություններ Մեծամորի ԲԿ-ում կապված տնօրենի տեղակալի հաստիքի հետ և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին

(Ժամկետ 02.07.2018թ)

Հարց 6 <<Սարդարապատի միջն. դպրոց>> ՊՈԱԿ-ի դասղեկների աշխատավարձերի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ բաժնի պետ Ն.Սարգսյանին՝

Ուսումնասիրել <<Սարդարապատի միջն դպրոց>> ՊՈԱԿ-ի դասղեկների բողոքը կապված հավելավճարների կրճատման հետ և ներկայացնել տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզպետին:

(Ժամկետ 02.07.2018թ):

Հարց 7 ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի N1 և Վաղարշապատի N2 հատուկ օժանդակ դպրոցների վերակազմակերպման վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ՝ Ն.Սարգսյանին

Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն Արմավիրի N1 հատուկ օժանդակ և Վաղարշապատի N2 հատուկ օժանդակ դպրոցների վերակազմակերպման գործընթացի վերաբերյալ:

(**ժամկետ 02.07.2018):**

Հարց 8 ՀՀ Արմավիրի մարզում ամառային զորակոչի կազմակերպման վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Գ.Խաչատրյանին 28.06.2018թվականին հրավիրել ՀՀ Արմավիրի մարզային զինկոմիսարին ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ խորհրդակցության:

Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ***Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ***

02.07.2018

X _____

Արձ.՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի քարտուղարության
ընդհանուր բաժնի պետ Մ.Առուշանյան